

**«ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Դավիթ Գյուրջինյան**  
ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ

**Բանալի բառեր.** լեզվաքաղաքականություն, լեզվական քաղաքականություն, լեզվական շինարարություն, լեզվաշինության, լեզվական պլանավորում, պետական լեզու, հանրալեզվաբանություն, բազմալեզվություն, երկլեզվություն, «Լեզվի մասին» օրենք

Ամենայն հայոց բանաստեղծը 1916 թ. դիպուկ գրել է. «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին և հոգեբանությունը»<sup>1</sup>:

Լեզուն նաև աշխարհը ճանաչելու միջոց է, մարդու իմացական գործունեության հիմքը, հաղորդակցության կարևորագույն միջոցը, այն հզոր գործիքը, որի միջոցով ձևավորվում է ազգային ինքնությունը:

Լեզուն միաժամանակ քաղաքական ազդեցության գործարար խթան է, մի միջոց, որի օգնությամբ իրականացվում է հանրության կառավարումը: Ամեն մի պետության ընդհանուր քաղաքականության մի մասն է լեզվական քաղաքականությունը, ինչպես որ կան մշակութային, տնտեսական, արտաքին, ներքին և այլ քաղաքականություններ:

Իսկ ի՞նչ է պետական լեզվական քաղաքականությունը: Պետության ռազմավարական որոշումներն են՝ ուղղված տվյալ պետությունում տարածված լեզվի (կամ լեզուների) պահպանմանը, տարածմանը կամ էլ որևէ լեզվի (լեզուների) գործածության սահմանափակմանը: Կարող ենք այսպես բանաձևել. եթե կա պետություն, պիտի լինի նաև լեզվական քաղաքականություն:

Հայաստանի լեզվական քաղաքականության (ժամանակակից ընկալմամբ) հիմքերը դարերի խորքերում են <sup>2</sup>: Այսպես. Հայաստանի կազմի մեջ մտցված

<sup>1</sup> Տե՛ս **Հովհ. Թումանյան**, «Հայոց գրական լեզվի խնդիրը»/Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, 1995, էջ 283:

<sup>2</sup> Հմմտ. **Ա. Այվազյան**, Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը (հայկական և եվրոպական սկզբնաղբյուրների համեմատական քննություն), Երևան, 2001, էջ 16-19:

ծայրագավառների բնակիչներին Արամ թագավորը (մ.թ.ա. 9-րդ դար) հրամայում է հայերեն սովորել, քանի որ պետության համար չափազանց կարևոր էր երկրի բնակչության լեզվական միասնությունը: ՊատմահայրՄովսես Խորենացին այդ առթիվ գրում է. «Հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական»<sup>3</sup>:

Վաղնջական ժամանակներում երկրի սահմանները որոշելիս կարևոր (երբեմն վճռական) դեր ուներ լեզուն: Խորենացին Հայաստանը նույնացնում էր հայախոսության տարածքին, ինչպես երևում է հետևյալ խոսքաշարում. «Եւ յարեւելից կողմանէ, զեզերբ հայկական խօսիցս»<sup>4</sup>: Այսինքն՝ Հայաստանը հայերենի ընդգրկած տարածքն էր, երկիր, որտեղ հայերեն էր խոսվում: Հնում ազգությունը ևս հաճախ որոշվում էր լեզվի միջոցով. հայերենի՝ որպես մայրենի լեզվի գործածությամբ էր որոշվում անհատի պատկանելությունը հայությանը<sup>5</sup>:

Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գյուտով հայերենի այբուբենի ստեղծումը ևս պետական քաղաքականության մեծագույն ձեռքբերումն էր: Հայկական պետականության պայմաններում հայերենը պետական լեզվի գործառույթներով է օժտված եղել: Լեզվաբաններն իրավացիորեն նշում են, որ կիլիկյան հայկական թագավորության շրջանում ևս հայերենը պետական լեզվի կարգավիճակ ուներ<sup>6</sup>:

Հայոց լեզուն հայերին կապող կարևորագույն միջոցն է եղել միշտ և այդ գործառույթն ունի նաև այսօր:

Նորագույն պատմության մեջ հայկական պետական լեզվաքաղաքականության սկզբնավորումը պիտի համարել առաջին հանրապետության կարճատև շրջանը (1918-1920): Այս պատմափուլի ամենանշանակալից իրադարձություններից մեկը հայերենին պետական լեզվի կարգավիճակ շնորհելն էր: Հենց այս փաստն է լեզվական քաղաքականության առկայության ամենանկատելի հիմքը:

<sup>3</sup> Տե՛ս **Մովսիսի Խորենացու** Պատմություն Հայոց, էջ 46 (գիրք Ա, գլուխ ԺԴ):

<sup>4</sup> Տե՛ս **Մովսիսի Խորենացու** Պատմություն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեանեւ Ս. Յարութիւնեան, Տիփլիս, 1913, էջ 112 (գիրք Բ, գլուխ Ը): Հմմտ. աշխարհաբար թարգմանությունը՝ «Իսկ արևելյան կողմից, հայերեն խոսակցության վերջի սահմաններում» (տե՛ս **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 137):

<sup>5</sup> Հմմտ. «Եվ շատ էլ չէին սխալվում հներում, եթե լեզու ասելով ազգ էին հասկանում» (**Հովհ. Թումանյան**, նշվ. հոդվածը նույն տեղում):

<sup>6</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 235, **Ս. Ղ. Ղազարյան**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, 2-րդ հրատ., Երևան, 1981, էջ 285-286:

Ռուսական շուրջ հարյուրամյա տիրապետության անմիջական հետևանքն էր, որ Հայաստանի պետական մարմիններում անկախության սկզբնական շրջանում գործավարության լեզուն գրեթե համատարած ռուսերենն էր, պաշտոնյաների և զինվորականների զգալի մասը հայերեն չգիտեր կամ ուղղակի չէր ուզում գրել կամ խոսել երկրի լեզվով<sup>7</sup>: Հայաստանյան մամուլը 1918-1920 թթ. հաճախ է անդրադարձել հայերենի կիրառության խնդիրներին, դրանց անդրադարձներ են եղել Հայաստանի խորհրդարանի և կառավարության նիստերի ընթացքում<sup>8</sup>: Պատմական նշանակալից իրադարձություն էր խորհրդարանի 52-րդ նիստում հայերենը պետական լեզու հայտարարելը 1919 թ. դեկտեմբերի 24-ին<sup>9</sup>: Լեզվի մասին օրենքը հրապարակվել է դեկտեմբերի 26-ին: Հայերենը պարտադիր էր դառնում պետական ու հասարակական հաստատություններում ու բանակում: Հիմնարկությունները պարտավոր էին վեց ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկել հայերենը պետական գործավարության պաշտոնական լեզու դարձնելու ուղղությամբ: Այլ լեզուների գործածությունը պիտի սահմանվեր հատուկ օրենքով<sup>10</sup>:

Խորհրդային շրջանում ևս հայերենը պետական լեզվի կարգավիճակ է ունեցել<sup>11</sup>: Այդ փաստն ամրագրված էր հանրապետության 1922, 1936, 1978 թվականների Սահմանադրության մեջ, սակայն լեզվական հարցերը կարգավորված չեն եղել առանձին օրենքով: Հայաստանն ինքնուրույն լեզվական քաղաքականություն չէր վարում, բայց լիովին զրկված չէր այդ հնարավորությունից. լեզվին առնչվող յուրաքանչյուր քայլ լեզվաքաղաքական բնույթ ուներ<sup>12</sup>:

Երկրի օրենսդիր բարձրագույն մարմինը՝ Գերագույն խորհուրդը, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունել է 1993 թ. մարտի 30-ին

<sup>7</sup> Տե՛ս **Դ. Ս. Գյուրջինյան**, Հայոց լեզվի նկատմամբ պետական վերաբերմունքի դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ., «ՎԷՆ» հանդես, թ. 4, 2018, էջ 247-248:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ: 1918-1920, Երևան, 2014, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, 1918-1920, Երևան, 2010 (երկու հրատարակությունների կազմող և գլխավոր խմբագիր **Ա. Վիրաբյան**):

<sup>9</sup> Քննարկման մասին տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 403-407 (ըստ «Յառաջ» օրաթերթի, թիվ 80, 31 դեկտեմբերի 1919թ.):

<sup>10</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, Երևան, 1998, էջ 209:

<sup>11</sup> Այդպիսի կարգավիճակ ունեին հարևան Վրաստանի և մերձբալթյան հանրապետությունների հիմնական բնակչության լեզուները նույնպես:

<sup>12</sup> Հմմտ. «Հայաստանում 1920 թուականի Նոյեմբերի 29-ին խորհրդային նոր իշխանութեան վերափոխմամբ որդեգրուած լեզուական քաղաքականութիւնը՝ յատկապէս Հայոց լեզուի ուղղագրութեան ոլորտում» (**Լ. Գ. Խաչերեան**, Հայոց համազգային մաշտոցեան համակարգուած միասնական եւ միակերպ ուղղագրութեան պատմութիւնը (Ե.-Ի. դարեր), Լոս Անջելըս, 1999, էջ 263):

(հանրապետության նախագահը հաստատել է ապրիլի 17-ին): Երկրի կենսագործունեության համար կարևորագույն նշանակություն ունեցող այս օրենքի 1-ին հոդվածի վերնագիրն է «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը»: Այս հոդվածում ներկայացված են ՀՀ լեզվական քաղաքականության հիմնական դրույթները՝ «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է», «Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը և տարածմանը», «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը» և այլն:

Տարիներ անց՝ 2011 թ. մայիսի 23-ին կատարված փոփոխությամբ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1.1 հոդվածում բացատրվել են օրենքում գործածված հիմնական հասկացությունները: Ըստ կարևորության առաջինը նկատված **պետական լեզվաքաղաքականություն** եզրույթն է բացատրվել:

Այսպիսով՝ երկրի լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների լեզվահարաբերությունները կարգավորող օրենքում գործածվել են տարբերակային եզրույթներ, որոնք, նույնաբովանդակ լինելով, տարբերվում են միայն իրենց կառուցվածքային տիպով՝ բառակապակցական (**լեզվական քաղաքականություն**) և բառային (**լեզվաքաղաքականություն**): **Լեզվաքաղաքականություն**-ն առաջացել է բառակապակցության առաջին բաղադրիչի կրճատումից և երկրորդի հետ միավորումից (հմմտ. **լեզվական ընտանիք – լեզվաընտանիք, լեզվական հարաբերություն(ներ) - լեզվահարաբերություն(ներ)** և այլն):

**Եզրույթի նշանակությունը:** «Լեզվականքաղաքականություն»-ն ընդգրկուն հասկացություն է: Մասնագիտական գրականության մեջ լեզվաքաղաքականությունը նույնացնում են պետության գործնական քայլերին՝ ուղղված «պետական լեզվի կարգավիճակին, նրա գործարույթներին, հասարակական կյանքի առավել կարևոր ոլորտներում պետական լեզվի մենիշխան գործածության պաշտպանությանը,

«տեղական» լեզուների գործածության կարգավորմանը»<sup>13</sup>: Լեզվաքաղաքականության իրագործման հիմնական գործիք է դառնում լեզվի մասին օրենքը:

Մեկ այլ մոտեցմամբ լեզվաքաղաքականությունը հասկացվում է այսպես՝ «պետության կամ որոշում ընդունելու իրավունք ունեցող հասարակական մարմնի բոլոր որոշումները, որոնք ուղղված են մեկ կամ մի քանի լեզուների գործածությունը սովյալ տարածքում (իրական կամ կարծական) կարգավորելուն»<sup>14</sup>: Ռուսական լեզվաբանական հանրագիտական բառարանի բացատրությունն ընդհանուր բնույթ ունի. «Հասարակության, պետության մեջ լեզվական հարցերը լուծելու գաղափարական սկզբունքների և գործնական միջոցառումների ամբողջությունը»<sup>15</sup>:

Լեզվաքաղաքականությունն այլ կերպ է ընկալվում, երբ վերաբերում է պետությունների խմբավորմանը, միավորմանը: Ահա այս մեջբերումը ցայտուն ներկայացնում է Եվրոպական խորհրդի մոտեցումը. «Եվրախորհուրդը զարգացնում է լեզվաքաղաքականությունը հետևյալ նպատակներով՝ պահպանել և զարգացնել լեզվական ժառանգությունը և Եվրոպայի մշակութային բազմազանությունը՝ որպես փոխըմբռնման զարգացման աղբյուր և այդպիսով հնարավորություն ընձեռել եվրոպացիներին ընդունելու, հասկանալու և հարգելու այլոց տեսակետները, զգացմունքները, հավատքն ու սովորույթները»<sup>16</sup>:

Լեզվական քաղաքականություն են իրականացնում նաև հասարակական հաստատություններ, լրատվության միջոցներ, ազգային շրջանակներ, անգամ երևելի անհատներ, որոնց մեծ ներգործություն ունեն հասարակության վրա: Օրինակ՝ «Հյուսիսսփայլ» ամսագրի **լեզվական քաղաքականությունը**: Կամ՝ «Սփյուռքահայերի՝ օտար լեզուների փոխառություններից խուսափելու **լեզվաքաղաքականությունը** մեծ մասամբ պայմանավորված է ազգային ինքնապաշտպանության առողջ մղումով»<sup>17</sup>:

Այսպիսով՝ լեզվաքաղաքականությունը պետության կամ պետությունների միավորումների կամ էլ հասարակական ազդեցիկ հաստատությունների (երբեմն նաև

<sup>13</sup> Տե՛ս, օրինակ, **Беликов В. И., Крысин Л. П.**, Социоллингвистика, Москва, 2001, էջ 263:

<sup>14</sup> Տե՛ս «Языковая политика в современном мире», Санкт-Петербург, 2007, էջ 97 (ֆրանսիացի լեզվաբան Լ.-ժ. Ռուսսոյի տեսակետն է):

<sup>15</sup> Տե՛ս Լингвистический энциклопедический словарь, Москва, 1990, էջ 616. Языковая политика բառահոդվածը):

<sup>16</sup> Տե՛ս «Եվրախորհրդի լեզվաքաղաքականությունը: Ժամանակակից լեզուների ուսուցման ու դասավանդման վերաբերյալ փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 2001, էջ 13:

<sup>17</sup> Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 7, Երևան, 1981, էջ 370 (**Մաքրամություն** բառահոդվածը):

հզոր անհատների) իրականացրած միջոցների համակարգն է, որի նպատակը այս կամ այն լեզվի կարգավիճակի և կառուցվածքի պահպանումն է (կամ փոփոխությունը): Ասենք, որ լեզվի կարգավիճակը պետության մեջ տվյալ լեզվի ունեցած դերն է այդ պետության մեջ կիրառվող այլ լեզուների համեմատությամբ, միաժամանակ՝ այդ նույն լեզվի դերը պետության սահմաններից դուրս՝ միջազգային ասպարեզում: Լեզվի կառուցվածքը նրա ներքին կազմությունն է (հնչյունական կազմ, ուղղագրություն, բառապաշար, քերականություն), ինչպես և լեզվի գոյավիճակային ձևերի հարաբերությունները (մի կողմից՝ գրաբար և աշխարհաբար, մյուս կողմից՝ միջին հայերենի առնչակցությունը գրաբարին և աշխարհաբարին, ներկայումս՝ արևելահայերենի և արևմտահայերենի կարգավիճակների, մերձեցման և փոխներթափանցման հարցեր, գրական լեզվի և բարբառների հարաբերակցությունը):

Լեզվաքաղաքականության ձևավորման և իրականացման համար անհրաժեշտ են մի շարք հիմքեր և պայմաններ: Դրանք են՝ գաղափարախոսական ապահովում, լեզուների փոխհարաբերությունների վարչական կարգավորում (կիրառվում են պատիժը և խրախուսումը, բայց առավելաբար առաջինը, ինչպես որ Հայաստանում է), լեզվական կանոնի հաստատում (որպես պետական լեզվի պատասխանատու՝ պետությունը ձգտում է կանոնարկման, ուստի և միասնականացման կանոններ է թելադրում հանրությանը, իսկ հանրությունն անընդհատ փորձում է այլընտրանքային լուծումներ գտնել և «շեղվել» կանոնից):

**Բառի ստեղծման ժամանակը:** «Լեզվական քաղաքականություն»

հասկացությունը համեմատաբար նոր է և կապվում է հանրալեզվաբանության մեջ 1970-ականներից գործածված, այնուհետև բացատրական ու լեզվաբանական բառարաններում արձանագրված **լեզվական շինարարություն, լեզվաշինարարություն** և **լեզվաշինություն** եզրույթներին: Պատահական չէ, որ **լեզվական քաղաքականություն-ը, լեզվաքաղաքականություն-ը** և հիշյալ միավորները մասնագիտական խոսքում հաճախ հանդես են գալիս միևնույն խոսքաշարում: Հմմտ. «Սկսվել է գրական լեզվի գիտակցված մշակման ու նորմավորման գործընթացը, ի հայտ են եկել **լեզվաշինության** և **լեզվական քաղաքականության** որոշակի միտումներ, այսպես կոչված՝ «գրապայքարը», որով հաստատվել է աշխարհաբարի գրավոր

գրական լեզվի կարգավիճակը»<sup>18</sup> և «Լեզվապլանավորման ձևերն են նորմավորումը, լեզվաշինությունը և լեզվաքաղաքականությունը»<sup>19</sup>:

**Լեզվական շինարարություն / լեզվաշինարարություն և լեզվաշինություն**  
 եզրույթները հայերենագիտություն մուտք են գործել ռուսերենից (языковое строительство, որը խորհրդային երկրում գիտական շրջանառության մեջ է մտել XX դ. 20-30-ական թվականներին): Անգլերենում որպես սրանց համարժեք գործածվում Language Planning «լեզվական ծրագրում» եզրույթը, որը XX դ. կեսերի ծնունդ է<sup>20</sup>: Ամերիկյան լեզվաբանության մեջ Ջ. Ֆիշմանը 1970 թ. **լեզվական պլանավորում**-ի<sup>21</sup> փոխարեն գործածեց **լեզվական քաղաքականություն**՝ այն դիտարկելով կիրառական հանրալեզվաբանության շրջանակում<sup>22</sup>:

Իսկ հայերենում երբ է սկսել գործածվել **լեզվաքաղաքականություն** բառը: Ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի (ԱՐԵՎԱԿ) <sup>23</sup> ունեցած նյութի՝ ամենավաղ վկայությունը 1980 թվականից է, հանրագիտարանային. «Ուսումնասիրում է **լեզվաքաղաքականության**, լեզվաշինության, լեզվական շփումների, ազգի և ազգային լեզվի, երկլեզվության և բազմալեզվության .... հարցերը»<sup>24</sup>: Եթե հաշվի առնենք, որ հանրագիտարանի հիշյալ հատորը պատրաստվել է նախորդ տասնամյակում, արտերկրյա գիտական մտքում եզրույթի շրջանառման ժամանակը, ապա հայերենում բառույթի ստեղծման շրջանը պիտի համարենք 70-ականները: Բառը հայերեն լեզվաբանական տպագիր աշխատություններում մինչ այդ չի հանդիպում, չի գրանցվել հայերենի մինչև 1980-ը լույս տեսած բառարաններում՝ բացատրական<sup>25</sup>,

<sup>18</sup> Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան». «Սովետական Հայաստան» հատորը, Երևան, 1987, էջ 475:

<sup>19</sup> Տե՛ս **Լ. Զաքարյան**, Լեզվապլանավորման թույլատրելի սահմանների որոշման սկզբունքները / Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, պրակ 2, Երևան, 1987, էջ 120:

<sup>20</sup> Տե՛ս **Haugen E.**, Planning for Standard Language in Modern Norway /Antropological Linguistics 1959. № 8: Հեղինակը հետազայում լեզվական շինարարությունը համարեց լեզվական քաղաքականության մի մասը (տե՛ս **Хауген Э.**, Лингвистика и языковое планирование / Новое в лингвистике. — Москва, 1975. Вып. 7: Социоллингвистика):

<sup>21</sup> Հայերենագիտության մեջ գործածվել է նաև **լեզվապլանավորում** տարբերակը:

<sup>22</sup> Տե՛ս **Скачкова И. И.**, Языковая политика и языковое планирование / «Политическая лингвистика», 1, 2015, էջ 128:

<sup>23</sup> Տե՛ս [www.eanc.net](http://www.eanc.net):

<sup>24</sup> Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6, Երևան, 1980, էջ 225 (գործածվել է **Հանրալեզվաբանություն** բառահոդվածում. **Լեզվաքաղաքականություն** բառահոդված հանրագիտարանը չունի):

<sup>25</sup> Տե՛ս **Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ**, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1972, **Է. Բ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

ուղղագրական-տերմինաբանական<sup>26</sup>, լեզվաբանական<sup>27</sup>: Այս փաստը ևս լրացուցիչ վկայում է, որ բառը (եզրույթը) գործածության մեջ չի եղել (կամ այնքան հազվադեպ է եղել, որ չի նկատվել):

**Բառարանային մշակումը:** **Լեզվաքաղաքականություն** բառն առաջին անգամ բառարանային գրանցում է ստացել 21-րդ դարի սկզբին, Ս. Էլոյանի կազմած նորաբանությունների բառարանում, *լեզվք.* (լեզվաբանական) ոճական նշումով<sup>28</sup>: Բառը բացատրվել է այսպես՝ «լեզվի նկատմամբ տարվող քաղաքականությունը», բնագրային օրինակը 1993 թվականից է, «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթից:

Արդյոք ճիշտ էր բառը նորաբանություն համարելը, երբ կար նրա հանրագիտարանային գործածության (մոտ երեսուն տարվա) փաստը, շուրջ մեկ տասնամյակ գործում էր «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, որտեղ հիշյալ տերմինը գործածվել է իբրև հիմնական հասկացության արտահայտիչ: Բառը նորաբանություն համարելը թերևս ճիշտ էր, քանի որ այդ շրջանում որպես լեզվաբանական եզրույթ դեռևս նոր է ընկալվել. այդ են վկայում սակավաթիվ գործածությունները:

Բառակապակցական **լեզվական քաղաքականություն** եզրույթը շատ ավելի վաղ է բառարանային գրանցման արժանացել: Առաջին անգամ հայտնվել է հայ-ռուսերեն լեզվաբանական բառարանում՝ *языковая политика* համարժեքով<sup>29</sup>: Երկրորդը ևս լեզվաբանական բառարան է, կրկին թարգմանական, եռալեզու<sup>30</sup>: Այստեղ հայերեն **լեզվական քաղաքականություն** եզրույթը ֆրանս. *politique linguistique*-ի և ռուս. *языковая политика*-ի համարժեքն է, ո՛չ գլխաբառ, բայց ներկայացված է «Հայերեն տերմինների ցանկում»: Ի դեպ, նշված երկու բառարաններում էլ մենաբառ եզրույթը (**լեզվաքաղաքականություն**) բացակայում է<sup>31</sup>:

<sup>26</sup> Տե՛ս **Ն. Խ. Բարսեղյան**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

<sup>27</sup> Տե՛ս **Ն. Ջ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարազոյլյան**, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:

<sup>28</sup> Տե՛ս **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002, էջ 199:

<sup>29</sup> Տե՛ս **Մ. Հ. Հարությունյան**, Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, Երևան, 1963, էջ 101:

<sup>30</sup> Տե՛ս **Ա. Հ. Նազարյան**, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, 1993, էջք 393, 620:

<sup>31</sup> **Լեզվաքաղաքականություն** եզրույթը տեղ է գտել մեր խմբագրած լեզվաբանական մի բառարանում, որ շուտով լույս կտեսնի (**Լ. Մ. Խաչատրյան**, Լեզվաբանական տերմինների բառարան):



**Գործածությունը:** **Լեզվաքաղաքականություն** եզրույթը հազվադեպ է գործածվել լեզվաբանական աշխատություններում, թեպետ վերջին տարիներին գործածության որոշակի աշխուժացում է նկատվում<sup>32</sup>: Հանդիպում է նաև մամուլի լեզվում, քանի որ լեզվաքաղաքականության հարցերը հանրային հետաքրքրություն են ներկայացնում: Նկատելի է, որ հրապարակումները հիմնականում վերաբերում են լեզվի բնագավառի պատասխանատու մարմնի (Լեզվի պետական տեսչություն, Լեզվի կոմիտե) գործունեությանը, բառը հաճախադեպ է այդ մարմնի ղեկավարների խոսքում<sup>33</sup>:

**Հաճախականությունը:** **Լեզվաքաղաքականություն** և **լեզվական քաղաքականություն** տարբերակների հաճախականությունը պարզելու համար կրկին դիմենք ԱՐԵՎԱԿ-ին<sup>34</sup>: **Լեզվաքաղաքականություն** բառույթի որոնումը որևէ տվյալ չի տրամադրում (քանի որ կորպուսի 75 հազարանոց հիմնական բառացանկի միավոր չէ և չի պիտակավորվել), ուստի ստուգում ենք ըստ բառաձևերի: Գործածվել է 29 համատեքստում (24 տեքստ), որոնցից 22-ը սեռականի ձևեր են: Գրեթե նույնքան է **լեզվական քաղաքականություն** տարբերակի հաճախականությունը՝ 27 համատեքստ (17 տեքստ), որոնց մեջ սեռականի ձևերը 12-ն են, 10-ը՝ ուղղականի: Ըստ այդմ կարող ենք եզրակացնել, որ բառային և բառակապակցական տարբերակները նույնատեսակ՝ նվազ հաճախականություն ունեն:

**Եզրույթի տեղը:** **Լեզվաքաղաքականություն**-ը և **լեզվական քաղաքականություն**-ը գրանցվել են լեզվաբանական բառարաններում, սակայն սոսկ այբբենական կարգով, իսկ լեզվաբանական մի աշխատության մեջ **լեզվական քաղաքականություն**-ն ընդգրկվել է **լեզվական** բաղադրիչ ունեցող տերմինաբանական շարքում

<sup>32</sup> Ուշագրավ է «Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ» (Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր) վերնագրով ժողովածուի լույսընծայումը (Երևան, 2013): Հմտ. նաև **Լ. Մովսիսյան**, «Լեզվաքաղաքականությունը ժամանակակից Ադրբեջանում» («21-րդ դար», թ. 3, 2009, էջ 86), «Գրական լեզվի կանոնարկումը **լեզվաքաղաքականության** առաջնային և հիմնական ուղղություններից է» (**Յու. Ավետիսյան**, Կանոնարկումը որպես լեզվաքաղաքականություն. արևելահայերեն-արևմտահայերեն առնչություններ / Արդի հայերենի հիմնախնդիրները, Երևան, 2015, էջ 39):

<sup>33</sup> Հմտ. **Վ. Միրզոյան**, «Լեզուաբանություն և **լեզուաքաղաքականություն**» (Բեյրութ, 1998), «Լեզվաքաղաքականությունը համապետական գործունեություն է» (**Վ. Միրզոյան**, Լեզվական օրենսդրության տասը տարին, Երևան, 2003, էջ 5) և **Լ. Գալստյան**, «Հայերենը **լեզվաքաղաքականության** առանցք» («Լեզվաշխարհ», հ. 1, 1995), «ԿԳՆ-ն չունի **լեզվաքաղաքականության** ծրագիր. **Լ. Միրզոյան**» («Երկիր», 20.02.2019), «Երկրորդ հիմնական խնդիրը, ըստ **Ս. Երիցյանի**, **լեզվաքաղաքականության** պետական ծրագրի ընդունումն է» ([www.1in.am/252685.html](http://www.1in.am/252685.html)), «Հայոց լեզվի խնդիրների, **լեզվաքաղաքականության** ու ոլորտի առաջնահերթությունների մասին է «Անկախը» գրուցել ՀՀ ԿԳՆ լեզվի կոմիտեի նախագահ **Դավիթ Գյուրջինյանի** հետ» («Անկախ», 13.07.2018):

<sup>34</sup> Դրանք չկան Բ. Կ. Ղազարյանի «Հայոց լեզվի հաճախականության բառարանում» (Երևան, 1982):

(ԼԵԶՎԱԿԱՆ ազդեցություն /անընդհատականություն / արտահայտություն / երևույթ / ընդհանրություն և այլն)<sup>35</sup>:

Ի վերջո, ո՞րն է **լեզվաքաղաքականություն** եզրույթի տեղը հայերենի լեզվաբանական տերմինահամակարգում: Հստակ է, որ այն պետք է լինի լեզվաբանական միջգիտակարգային ճյուղերի անվանումների շարքում, սերտորեն առնչակից **հանրալեզվաբանություն** եզրույթին:

«Լեզվաքաղաքականություն» եզրույթի ընդհանուր բնութագիրը,

Լեզվաբանական տերմինաբանության հարցեր:

Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 49-58:

---

<sup>35</sup> Տե՛ս **Լ. Հ. Ղազանյան**, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն / «Լեզվի և ոճի հարցեր», պրակ IV, Երևան, 1977, էջ 317: Այստեղ ասվում է, որ «տերմին-անվանումների շարքը կարելի է դասել նաև լեզվաբանական ուղղությունների, ուսումնասիրության մեթոդների և հայեցակետերի անվանումները», որոնց թվում հիշատակվում են նաև **լեզվահոգեբանություն**-ը և **լեզվահնչաբանություն**-ը **լեզվահնչաբանություն**-ը (էջ 255-256): Նույն տրամաբանությամբ այստեղ կարող էր լինել նաև **լեզվաքաղաքականություն**-ը: